Շաբաթական ակնարկ 20.01.2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին խառը արդյունքներ:



Ներդրումային բանկերն արձանագեցին սպասվածից բարձր արդյունքներ:



Արծաթի գներն աճում են արձանագրելով նոր ռեկորդային բարձր մակարդակներ:



Բոլոր ժամկետայինության պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են:

Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը նվազեց 0.35% -ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը նվազեց 0.86%-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը նվազեց 0.29% -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 2.13%-ով



Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան

- Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսներից դրական եկամտաբերություն արձանագրեց միայն Russell 2000-ը, մինչդեռ մնացած ինդեքսները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:
- Nasdaq-ը, Dow Jones-ը և S&P500-ը շաբաթն ավարտեցին բացասական եկամտաբերությամբ:
- Խոշոր բանկերի 2025 թվականի չորրորդ եռամսյակի հաշվետվության արդյունքները թողեցին բացասական ազդեցություն ընդհանուր շուկաների կատարողականի վրա:



Փառահեղ յոթնյակ

- Նախորդ շաբաթ S&P 493 ինդեքսի կատարողականը կրկին գերազանցեց «Փառահեղ յոթնյակի» կատարողականին:
- Շուկայում աճը շարունակում է ընդլայնվել, որը աճի առողջ նշան է, կապիտալը հոսում է մեծ կապիտալիզացիայի ունեցող տեխնոլոգիական ընկերություններից դեպի ավելի լայն շուկա:

Բաժնետոմսերի շուկա | 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Taiwan Semiconductor-ի (TSM) 2025 թվականի չորրորդ եռամսյակի հասույթը կազմել է մոտ 33.7 միլիարդ դոլար, որը 25.4%-ով բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածից: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 19.50 թայվանական դոլար (≈0.63 ամերիկյան դոլար), համախառն շահույթը և գործառնական շահույթը կազմել են համապատասխանաբար 62.3% և 54.0%՝ գերազանցելով սպասումները: TSMC-ն ընդգծել է արհեստական բանականության և բարձր արդյունավետության համակարգերի նկատմամբ մեծ պահանջարկը և բարձրացրել է 2026 թվականի կանխատեսումը:



JPMorgan Chase-ն (JPM) 2025 թվականի չորրորդ եռամսյակում ստացել է մոտ 46.8 միլիարդ դոլարի հասույթ, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 4.63 դոլար: Ընկերության հասույթը տարեկան կտրվածքով աճել է մոտավորապես 7%-ով և գերազանցել է վերլուծաբանների սպասումները: Չնայած զուտ շահույթը փոքր-ինչ նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ընկերության բաժնետոմսերի գինը նվազել է ներդրումային բանկային միջնորդավճարների սեգմենտում որոշակի ճնշման պատճառով:

Բաժնետոմսերի շուկա | 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Bank of America-ն (BAC) 2025 թվականի չորրորդ եռամսյակում ստացել է մոտ 28.4 միլիարդ դոլարի հասույթ, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 0.98 դոլար, ինչը գերազանցում է վերլուծքաների կանխատեսումները: Զուտ շահույթը տարեկան կտրվածքով աճել է մոտավորապես 12%-ով՝ հասնելով 7.6 միլիարդ դոլարի, ինչը պայմանավորված է զուտ տոկոսային եկամտի աճով և ավանդների ծավալով: Ընկերության բաժնետոմսերի գինը նվազել է ներդրումային բանկային միջնորդավճարների սեգմենտում ճնշման պատճառով:

Morgan Stanley-ն (MS) 2025 թվականի չորրորդ եռամսյակում ստացել է մոտավորապես 17.9 միլիարդ դոլարի հասույթ, մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 2.68 դոլար, ընկերությունը գերազանցել է վերլուծաբանների սպասումները՝ թե՛ հասույթի, թե՛ շահույթի մասով: Ներդրումային բանկային վճարները տարեկան աճել են մոտ 47%-ով, բաժնետոմսերով առևտրի հասույթն աճել է, աճել են նաև ակտիվների կառավարումից ստացված վճարները: Հաշվետվությունը արտացոլում է հաճախորդների կողմից ուժեղ ներհոսքը:



Պարտատոմսերի շուկա

Գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՆ խոշոր բանկերի (JPM, GS, BAC, C, WFC, MS) բաժնետոմսերի կատարողականը նախորդ շաբաթ:

- Հունվարի 13-14-ին բանկերի բաժնետոմսերը միաժամանակ արձանագրեցին բացասական եկամտաբերություն, մասնավորապես՝ Wells Fargo-ն JPM-ը և Bank of America-ն:
- Բանկերի 2025 թվականի չորրորդ եռամսյակի ցուցանիշները արձանագրեցին թույլ արդյունքներ ներդրումային բանկային ծառայությունների սեգմենտի արդյունքներով պայմանավորված:
- Սակայն Հունվարի 15-ին արձանագրվեց կտրուկ վերականգնում, քանի որ Goldman Sachs-ը և Morgan Stanley ներդրուային բանկերի արդյունքները գերազանցեցին վերլուծաբանների սպասումները:



Պարտատոմսերի շուկա

Այս գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության դինամիկան՝ տարբեր ժամկետայնության պարտատոմսերի համար՝ 2, 5, 7, 10 և 30 տարի:

- Հունվարի 12-13-ին պարտատոմսերի եկամտաբերությունը համեմատաբար կայուն էին:
- Հունվարի 14-ին արձանագրվեց պարտատոմսերի եկամտաբերության կտրուկ անկում (գները բարձրացան), կապված խոշոր բանկերի սպասվածից վատ ցուցանիշներով, որը ռիսկից խուսափելու հետևանք էր:
- Բայց Հունվարի 15-16-ին պարտատոմսերի եկամտաբերությունը կտրուկ վերականգնվեց հատկապես կարճաժամկետ պարտատոմսերի:



Ոսկի | Արծաթ | Պլատին | Պղինձ

- Արծաթը շարունակում է իր հաղթաշավը. այն նախորդ շաբաթ աճել է մոտ 11.5%-ով, իսկ տարեսկզբից արծաթի գինը բարձրացել է 34.4%-ով:
- Ոսկին և պլատինը նույնպես դրական կայուն աճ ապահովեցին՝ համապատասխանաբար 1.7% և 1.4%:
- Պղինձն արձանագրեց բացասական եկամտաբերություն՝ նվազելով 1.1-%-ով:

Մետաղների գնագոյացումը այժմ կապված է սպեկուլյատիվ գործարքների և մաքսատուրի հետ, և չի արտացոլում պահանջարկի և առաջարկի արդյունքում ձևավորվող արդարացի գինը:

Դոլար

Դոլարը անկայուն էր, բայց շաբաթն ավարտեց գրեթե անփոփոխ մակարդակներում:

Ոսկի | Արծաթ

Ոսկին վերջին վեց շաբաթներից հինգում աճել է: Հատկանշական է, որ նախորդ շաբաթ ամբողջ աճը տեղի է ունեցել երկուշաբթի օրը: Շաբաթվա ընթացքում ոսկու գները տատանվեցին հիմնականում 4580-4620 դոլարի միջակայքում:

Սա, անկասկած, արծաթի համար տարվա լավագույն սկիզբն է առնվազն վերջին 30 տարվա կտրվածքով:





Նավթ

Նավթի գները բարձրանում էին չորրորդ շաբաթն անընդմեջ (չնայած շաբաթվա վերջին նրանք նահանջեցին իրենց գագաթնակետից, քանի որ Թրամփը հրաժարվեց Իրանի դեմ ռազմական գործողություններից):

Բիթքոյն

Բիթքոյնը գրանցեց իր լավագույն շաբաթական ցուցանիշը վերջին երեք ամսվա ընթացքում՝ նախորդ շաբաթ հասնելով երկամսյա առավելագույնին, նախքան նահանջելը մինչև 95,000 դոլարի մակարդակներ:

Հետաքրքիր փաստեր

Մանրածախ ներդրողները 169 օր անընդմեջ գնում են ամենամեծ ֆիզիկական արծաթի ETF-ը՝ SLV-ն, որը պատմության մեջ գնումների ամենաերկար շարքն է: Միայն վերջին 30 օրվա ընթացքում արծաթով ապահովված SLV, PSLV և AGQ ETF-ները ներգրավել են ռեկորդային՝ 921.8 միլիոն դոլարի ներհոսք: Արծաթի մանրածախ գնման ակտիվությունն այժմ 2.1 անգամ գերազանցում է եռամսյա սահող միջինը:
Սա զգալիորեն գերազանցել է ոսկու և կրիպտոարժույթային ֆոնդերի ակտիվությունը: Մանրածախ ներդրողները արծաթի մեջ ներդնում են գումար, ինչպես երբևէ:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ կորպորատիվ պարտատոմսերի վարկային որակը վատթարանում է.

2025 թվականին մոտ 55 միլիարդ դոլարի կորպորատիվ պարտատոմսեր ներդրումայինից նվազեցվել են ոչ ներդրումային վարկանիշի, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2020 թվականից ի վեր: Միևնույն ժամանակ, գրանցվել է ընդամենը 10 միլիարդ դոլար ընդհանուր ծավալով վարկանիշի բարձրացում դեպի ներդրումայինի, ինչը ամենացածր ցուցանիշն է առնվազն վեց տարվա ընթացքում: Սա նշանակում է, որ իջեցումների ծավալը 5.5 անգամ ավելի բարձր էր, քան բարձրացումները՝ համեմատած 2020 թվականի 4.8 անգամի հետ: Համեմատության համար, 2024 թվականին վարկանիշի իջեցումները կազմել են ընդամենը 4 միլիարդ դոլար, իսկ բարձրացումները՝ 22 միլիարդ դոլար, ինչը նշանակում է, որ բարձրացումները գերազանցել են իջեցումները 5.5 անգամ:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում 30-ամյա հիփոթեքային վարկի միջին տոկոսադրույքը՝

Բոլոր ժամանակների ամենացածր ցուցանիշը (2021 թվականի հունվար). 2.65%
2023 թվականի գագաթնակետը՝ 7.79%
Այսօր տոկոսադրույքը՝ 6.06% (ամենացածրը՝ 2022 թվականի սեպտեմբերից ի վեր)

Հետաքրքիր փաստեր

2026 թվականի ֆինանսական տարվա առաջին երեք ամիսներին դաշնային կառավարությունը նախատեսում է ստանալ 1.2 տրիլիոն դոլար և ծախսել 1.8 տրիլիոն դոլար:



ԱՄՆ տնտեսական օրացույցը

Այս շաբաթ 111 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2025 թվականի չորրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Johnson & Johnson (JNJ), Netflix (NFLX), Procter & Gamble (PG), Charles Schwab (SCHW), Capital One Financial (COF), 3M (MMM) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվություններիը:

#1 / 111 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 6

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	JNJ	Johnson & Johnson	Healthcare	Drug Manufacturers - General	USA	526.82B	21.10	218.66	-0.41%	9,698,596
2	NFLX	Netflix Inc	Communication Services	Entertainment	USA	402.12B	36.76	88.00	-0.06%	46,895,667
3	GE	GE Aerospace	Industrials	Aerospace & Defense	USA	342.94B	43.35	325.12	1.62%	3,993,240
4	PG	Procter & Gamble Co	Consumer Defensive	Household & Personal Products	USA	337.73B	21.10	144.53	-0.07%	11,493,604
5	INTC	Intel Corp	Technology	Semiconductors	USA	234.09B	4430.19	46.96	-2.81%	126,001,981
6	ABT	Abbott Laboratories	Healthcare	Medical Devices	USA	211.73B	15.27	121.76	-1.43%	10,287,200
7	ISRG	Intuitive Surgical Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	189.66B	70.81	535.00	-1.17%	3,008,224
8	SCHW	Charles Schwab Corp	Financial	Capital Markets	USA	184.48B	24.35	103.82	1.03%	10,855,505
9	COF	Capital One Financial Corp	Financial	Credit Services	USA	152.03B	101.42	239.14	0.92%	6,683,412
10	PLD	Prologis Inc	Real Estate	REIT - Industrial	USA	126.67B	38.78	133.21	0.35%	4,489,739
11	MMM	3M Co	Industrials	Conglomerates	USA	89.14B	26.82	167.80	-1.93%	7,322,784
12	USB	U.S. Bancorp	Financial	Banks - Regional	USA	84.56B	12.45	54.40	0.83%	13,728,007
13	FCX	Freeport-McMoRan Inc	Basic Materials	Copper	USA	84.30B	41.28	58.71	-2.08%	21,032,450
14	TEL	TE Connectivity plc	Technology	Electronic Components	Ireland	70.74B	39.10	241.01	-0.38%	1,633,865
15	SLB	SLB Ltd	Energy	Oil & Gas Equipment & Services	USA	69.81B	18.06	46.73	0.34%	17,336,033
16	CSX	CSX Corp	Industrials	Railroads	USA	67.50B	23.56	36.25	-0.14%	18,013,639
17	TFC	Truist Financial Corporation	Financial	Banks - Regional	USA	63.95B	13.41	49.99	-0.58%	8,259,168
18	KMI	Kinder Morgan Inc	Energy	Oil & Gas Midstream	USA	62.20B	22.92	27.96	2.01%	14,239,952
19	TRV	Travelers Companies Inc	Financial	Insurance - Property & Casualty	USA	60.10B	10.59	269.42	-0.71%	1,838,421
20	FAST	Fastenal Co	Industrials	Industrial Distribution	USA	50.22B	41.01	43.74	0.48%	17,060,673

Filters: earningsdate:nextweek export

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, JAN. 19					
	None scheduled, Martin Luther King Jr. holiday				
TUESDAY, JAN. 20					
	None scheduled				
WEDNESDAY, JAN. 21					
10:00 am	Construction spending (delayed report)	Oct.		0.1%	0.2%+
10:00 am	Pending home sales	Dec.		1.0%	3.3%
THURSDAY, JAN. 22					
8:30 am	Initial jobless claims	Jan. 17		208,000	198,000
8:30 am	GDP (first revision)	Q3		4.3%	4.3%
10:00 am	Personal income (delayed report)	Nov.		0.4%	0.4%++
10:00 am	Personal spending (delayed report)	Nov.		0.5%	0.4%++
10:00 am	PCE index (delayed report)	Nov.		0.2%	0.3%++
10:00 am	PCE (year-over-year)			--	2.8%++
10:00 am	Core PCE index	Nov.		0.2%	0.2%++
10:00 am	Core PCE (year-over-year)			--	2.8%++
FRIDAY, JAN. 23					
10:00 am	Consumer sentiment (final)	Jan.		54.0	54.0
9:45 am	S&P flash U.S. services PMI	Jan.		--	52.5
9:45 am	S&P flash U.S. manufacturing PMI	Jan.		--	51.8

+August results
++September results

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am